Հանդիպման սկզբում ՀՀ մշակույթի նախարարը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց Հայաստանի եւ Չեխիայի մշակույթի նախարարությունների միջեւ 2010 թ. ստորագրված համաձայնագրի գործնական արդյունքներն ու ներկայումս ձեռնարկվող համատեղ ծրագրերը:

Ողջունելով Չեխիայի մշակույթի նախարար Ալենա Հանակովայի այցը Հայաստան՝ Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ մշակույթի նախարարությունների միջեւ ձեւավորված համագործակցությունը դրական արդյունքներ կարձանագրի: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ արձանագրեց, որ երկու երկրների հարաբերությունները թե՛ քաղաքական եւ թե՛ մշակութային ոլորտներում ընդարձակվում, զորանում եւ առավել լայն ընդգրկում են ստանում:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Չեխիայի հայկական համայնքին: Այս առնչությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ի դեմս տիկին Ալենա Հանակովայի, իր շնորհակալությունը հայտնեց Չեխիայի իշխանություններին՝ հայերի հանդեպ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ նորակազմ հայկական համայնքն իր դրական ներդրումը պիտի բերի Չեխիայի հասարակական եւ մշակութային կյանքի զարգացմանը:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաեւ միջմշակութային շփումների ու փոխանակման անհրաժեշտությանը, հասարակական կյանքում քրիստոնեական հավատի ու արժեքների կարեւոր դերակատարությանը, Եկեղեցի-պետություն հարաբերություններին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՈՒԵԼՍԻ ԱՐՔԱՅԱԶՆ ՉԱՐԼԶՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Մայիսի 30-ին Ուելսի արքայազն Չարլզը, որ Հայաստանում է գտնվում «Երեւան, իմ սեր» բարեգործական հիմնադրամի հրավերով, այցելեց համայն հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Մայր Տաճարում արքայազնին ողջունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետն արքայազնին ներկայացրեց Հայոց Եկեղեցու պատմական առաքելությունը հայ ժողովրդի կյանքում եւ կարեւոր դերակատարությունը ազգային ինքնության պահպանման, անկախ պետականության վերականգնման գործում: Նորին Սրբությունը նաեւ անդրադարձավ միջեկեղեցական հարաբերություններին՝ մասնավորապես ներկայացնելով Հայ եւ Անգլիկան եկեղեցիների համագործակցությունը:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ արքայազն Չարլզն այցելեցին Մայր

Տաճարի ավանդատուն-թանգարան, ուր Ուելսի արքայազնը ծանոթացավ Հայ Եկեղեցու կողմից պահպանվող հոգեւոր եւ մշակութային արժեքներին:

Վեհափառ Հայրապետը եւ Ուելսի արքայազնը միասին շրջեցին Մայր Աթոռի տարածքում, այցելեցին Ս. Վարդան եւ Ս. Հովհաննես Մկրտիչ մատուռ-մկրտարան: Շրջայցի ընթացքում արքայազնին ներկայացվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գործունեությունը:

Ուելսի արքայազն Չարլզը եղավ նաեւ «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում, ուր ի պատիվ արքայազնի տեղի ունեցավ ընդունելություն, որին ներկա էին նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերարներ տեր եւ տիկին Վաչե եւ Թամար Մանուկյանները, տիար Արմեն Սարգսյանը, տեր եւ տիկին Հայկ եւ Էլզա Դիդիզյանները:

Հայաստան այցի ընթացքում արքայազն Չարլզը եղավ նաեւ մի շարք սրբավայրերում՝ Խոր Վիրապի վանքում, Ս. Գեղարդավանքում եւ Ս. Հռիփսիմե վանքում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ադրբեջանի Շարուրի վիճակագրական գրասենյակի տարածքում